ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

23 սեպտեմբերի 2019 թ. N 230-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 10-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի «Սելեկցիոն նվաճումների փորձաքննության և տնտեսական օգտակարության փորձարկումների գնահատման փորձագիտական խորհուրդ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 10-Ն հրամանի թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ժիրայր Միրզոյան

Հավելված
Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2019 թվականի սեպտեմբերի 23-ի
N 230-Ն հրամանի

«Հավելված թիվ 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2011 թվականի փետրվարի 24-ի
N 10-Ն հրամանի

Կ Ա Զ Մ

ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Վ. Ավետիսյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ)
Ա. Բաղալյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ (խորհրդի նախագահի տեղակալ)
Եվ. Հակոբյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (խորհրդի անդամ)
Մ. Ավանեսյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ (խորհրդի անդամ)
Կ. Ադամյան	«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն (խորհրդի անդամ)
Ն. Մելքումյան	«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր սերմնաբույծ (խորհրդի անդամ)
Կ. Հովհաննիսյան	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի

	վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի վարիչ (ըստ անհրաժեշտության)
Ա. Գույան	Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (ըստ անհրաժեշտության)
Գ. Սահակյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար):»: